

ԱՄԱՆՈՒՄ ԳՐՈՒԹԻՒՆ

Պաշխարիտ	համար
Տարեկան	12 ֆր.
Վեցամսյա	6 "
Արևմտահայկանի	
համար տարեկան	15 "
Վեցամսյա	8 "

Ամերիկայի	համար
Տարեկան	3 ֆր.
Վեցամսյա	1.50 "

Մանուկան տղա առաջին երեսին համար 40 ս. վսի վերջին երեսի համար 20 սանթիմ հ. երեսին անդի անգլալեռու համար 20 0/0 գեղջ կըլ շայ:

Վառնայի համար ձևով 40 սանթիմ

ՇԱՐՋՈՒՄ

ԻՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐՋՈՒՄ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Եստիկ եր դրամ դ. կի ի հոլրագրութեան հասցիկե

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjourn“ Varna (Bulgarie)

Արևմտահայկանի համար ձևով (20 ՍԱՆԹԻՄ) (Պաշխարիտ համար ձևով (15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք եւ չնկ տրուի

«ՇԱՐՋՈՒՄ»-Ի ԲԱԺԱՆՈՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԵՒԿ ՎՃԱՐԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Այս էջերուն մէջ մենք արդէն խօսեցանք Աւստրիոյ և Ռուսիոյ բարենորոգչական գործունէութեան մասին, որու յաջողութեան վրայ սակայն շատ վառ յոյսեր չի յայտնեցիրք: Խնդիրը ամէն կողմէ լուսարանելու համար մենք հիմա կանգ կառնենք մակեդոնացի յեղափոխականներու գործունէութեան առջեւ:

Սարաֆով այժմ կը ճանապարհորդէ Եւրոպայի մայրաքաղաքները: Իրեն հետ են Մանասթըրի պատմաբանական շրջանի զեկավար Գերշիկով և ժուռնալիստ Լիպով:

Մեր ընթերցողներուն արդէն ծանօթ է Սարաֆով, այս առթիւ անոնց ծանօթացնենք նաև իրեն զինակից ընկերը: Գերշիկով մտաւորապէս 30 տարեկան բարձրահասակ և նիհար մարդ մը է, խիստ, բայց համակրելի զիմագով: Հինգ տարի է ի վեր նա իր մարդ խանդով նուիրուած է «ներքին կազմակերպութեան» գործերուն:

Ի՞նչ նպատակով կը ճանապարհորդէ Սարաֆով, այս մասին խօսքը կը ձգենք իրեն:

«Ձէնքերը հիմա կը հանգչին Մակեդոնիոյ մէջ—կը յայտարարէ Սարաֆով «Յայթի թղթակցին—և կը տիրէ սպանիչ խաղաղութիւն մը: Դիւանագէտները պիտի սկսին բարենորոգումներու գործը, բայց իրենք ալ զիտեն, որ ներկայ պայմաններու մէջ իրենց գործակալները Հիլմի վաշային ձեռքին տակ խաղաղութիւն պիտի գտնան:

Ի՞նչ ընկերներովս և խումբերովս ամբողջ Մակեդոնիոյ մէջ ես արշաւանքներ գործեցի: Ամէն կողմ կը տիրէ վերջին աստիճան թշուառութիւն, որը անմիջական օգնութեան կը կարօտի: Ի՞նչ գարնան ի՞նչ կը պատահին «ներքին կազմակերպութիւնը» ինք ալ զեռ չի գիտեր, որով-

հետեւ ձմրան վերջը կազմակերպութիւնը Մակեդոնիոյ գաղտնի գործակալներ զրկելով ժողովրդին կարծիքը պիտի իմանայ: Մենք յուսով ենք, որ ժողովրդը նորէն պէնք պիտի վերցնէ և ապստամբի:

Սարաֆովն իշխանը մնացած է երկու սուրի մէջ տեղ: Ձմրան ընթացքին մէջ յայտնի պիտի ըլլայ բոլորքար կառավարութեան մակեդոնական նոր ապստամբութեան մը հանդէպ բռնի իրքերը: Եթէ դիւանագէտները ընդարձակ բարենորոգումներ չը ներմուծեն, մեծ կարելիութիւն կայ, որ գարնան Պալքանը նորէն յուզուի և այս անգամ աւելի ուժեղ:

Սերպիոյ մէջ նախարարներու հետ տեսնուելու առիթը չունեցանք, բայց ժողովրդին ցոյց տուած ընդունելութիւնը և թագաւորին ու նախարարներու մօտ անձնատրուութեանց մեղ յայտնած համակրութիւնը շատ յուզիչ էր: Սերպ—պոլկարական համերաշխ գործունէութեան մը համար կայ պատրաստ հող: Հին Սերպիոյ պիտի մասնակցի մեր ապստամբութեան: Մակեդոնիան բաժնելու մասին խօսք կարելի չէ ընել: «Մակեդոնիան մակեդոնացիներու համար», միայն այս սկզբունքով մենք կարող ենք սերպերու օգնութիւնը ընդունել և անոնք սկսած են այս սկզբունքին հետ հաշտուիլ:

Մենք և սերպերը հիմա կը կասկած չենք, որ բարենորոգումներու պատրուակին տակ երկու պետութիւնները ունին թաղուն միտքեր, և այս նպատակաւ կուզեն ժողովուրդը սիրաշահիլ, բայց ուսնելը բոլորովին ապիկար զանուեցան այդ գործի մէջ: Եւստրիոյցիք իրենց ըրած պաշտպանութիւններով և հաստ գած օգնութիւններով կարողացած են սիրտերը գրաւել, սակայն մենք օ և է բան թույլ չպիտի տանք և մեր վերջին կաթիլ արիւնը պիտի թափենք Մակեդոնիոյ անկախութիւնը ապահովելու համար:

Ձենք յուսար, որ միանսս, Անգլիա և Իտալիա Մակեդոնիոյ ներկայ մեծիշխանական գրութիւնը երկար տոնն հանգուրժեն: Անոնք ապստամբութեան սկիզբէն ի վեր ցոյց տուին մեր դատին համար համակրանք:

Մենք պիտի երթանք Պարիզ, Լոնտոն, Հոնոլմ, Սյա տեղերը պիտի այցելենք զի անագէտ շրջանի մարդիկ զանոնք համոզելու, թէ պէտք է Մակեդոնիոյ մէջ կարգ ու կանոն մտցնել և վերջ տալ եւրոպական այս ու այն պետութեան շահամոլ ոտնձգութեանց:

Մեր գրութիւնը դժուար է, մենք պիտենք այդ, բայց ունէ խոչնդոտի առջեւ չենք ընկնուիր, մինչեւ որ Մակեդոնիա ստանայ քաղաքական անկախութիւն: Մենք որոշած ենք շարունակել ապստամբութեան համար սկսուած կռիւ մինչեւ վերջը:

Սարաֆով վճարողական է և որոշ ինք իր մէջ, Ան ման չի գար սղորմութիւն խնդրելու, այլ զըրութիւնը ուսումնասիրելու և իր բռնելիք ապագայ ընթացքը որոշելու: Այսպիսով ուղղագէտ հերսը ցոյց կուտայ նաև զիւանագիտական հասկացողութիւն:

Սարաֆովը լսելէ վերջ յաջորդ անգամ մենք կը քննենք զօրավար Յոնչէվի ճանապարհորդութեան նպատակը:

Մարգարէտնի

ՇՈՒՄԼՍՅԻ ՀՈԳԵԶԱՆԳԻՍՏԸ

Նոյեմբեր 30ին տեղոյս Պետո-Պուլկարացի ընթերցարանի վարչութեան կողմանէ եղած հրաւերին վրայ, քաղաքիս Ս. Աստուածածին եկեղեցոյն մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ անմահ Պետոյի և բոլոր մարտիրոսացած հայ յեղափոխականներու յիշատակին համար: Իսկ երեկոյան ժամը 8ին աստիճանութիւն մը տեղի ունեցաւ Վարդանեան արական վարժարանի սրահին մէջ: Առաջին ատենախօսք եղաւ Պ. Տաճատ Պէյլերեան, որ նկարագրեց անմահ Պետոյի կենսագրութեան ընդհանուր գծերը:

զովեց անոր խնայքը, բացատրեց անոր հոգեւոյ օրինակելի բարձրութիւնը ու ազնուութիւնը և հրաւիրեց ժողովուրդը իր պարտականութիւնները կատարել զէպի յեղափոխութիւնը: Երգեցողութենէ վերջ Պ. Տիրան Մէստուճեան զպրոցական աշակերտներէն յաջող կերպով արտասանեց ոտանաւոր մը շատ ազդու և ոգեւորիչ կերպով: Յետոյ Դանիէլ Բաղդըրաթլեան «Իրօշակոնէն կարգաց Պէտոյի յիշատակին նուիրուած Կարիքին Ուսումնորդ», որմէ ետքը զպրոցական աշակերտներէն Պ. Յակոբ Սերբեան յաջող կերպով արտասանեց ոտանաւոր մը: Վերջին ատենախօսք եղաւ Պ. Արտաշէս Կարապետեանը, որ բացատրեց հայ ցեղի ունեցած տոնմային հակումները զէպի յառաջիմութիւն ու քաղաքակրթութիւն: Համառօտի յիշեց հայութեան իր գոյութիւնը պահպանելու համար մղած քաղաքական մասնակի և ընդհանուր պայքարները: Ատենախօսք մասնաւորի չեց սա կէտը թէ՛ ժողովուրդը ընդհանրապէս հաշտ կերպով չի վերաբերիր զէպի յեղափոխական սուրբ և անհրաժեշտ գործը:

Ցաւ կը զգամ յայտնել, որ Շուվալի հասարակութեան շրջէ մեծ մասը բացակայ էր սղահանգէսէն, Հանգիստեանները մեկնեցան բուրձովին գոհ: Վարչութիւնը որոշած է շարունակել այս ե. հաստատել լարստական գրութիւն մը:

Օճնիկ Աղաւանակ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Թուսճուք. 30 նոյ. 1903

Թաղական խորհրդոյ ընտրութիւնը, որ յետաձգել էր այսօրեան, էլի չի կայացաւ:

Տեղական քաղաքապետութեան կողմանից, մի պաշտօնական յայտարարութիւն՝ մտաւորապէս հետեւեալն է յայտարարում.

«Հայոց թաղականութեան ընտրութիւնը կը կայանայ յառաջիկայ կիրակի, հայկական եկեղեցումը, առաւօտեան ժամի 8ին ուր ներկայ են լինելու քաղաքապետարանից երկու պաշտօնեաներ, որոնք անուշտ հսկելու են. ընտրողներ կը լինին նրանք, որոնց անուններ քաղաքապետարանում արձանագրվել են և այժմու թաղ խորհրդից լրացուել: Մենք առանց վարանելու կարող ենք եզրակացնել, թէ սրա մէջ կայ մի թաքուն նպատակ, որովհետեւ մինչեւ ցարդ ոչ մի տեղ, թաղ, ընտ-

բուժեան խոթիւ . սեղական կա-
ռավարութիւնը ձեռնամուխ չէ եղել .
Մեզ համար սրեալ է լիազօր առանձ-
նաշնորհում՝ բնարեւու մեր թաղա-
կանութիւնը . ըստ մեր եկեղեցական
սահմանած օրէնքի :

Այս այսպէս լինելով հանդերձ , ե-
թէ նրանք (այժմու թաղականութիւ-
նը) գիտել են այդ արտուրդ միջո-
ցի , որպէսզի գրանցի եւ սեղացի նա-
յիւրի միջնէ անըստու զցեն , ինչ որ
նրանք ձգտում են ամեն մի բանում
անել այդ . մենք սրա հանդէպ կա-
սենք թէ՛ նրանք այդ կոչման ար-
ժանի մարդիկ չեն եւ այդ ինտրիկ
արել են անարգ շեռնից գրգռած :

Բայց սեսէք թէ ինչ է անում
տեղւոյս ռեբուրում հայ երիտասար-
դութիւնը սրա հանդէպ . նրանք չա-
բաթ օր տարած կոչեր ցրեցին սա-
պարուհակութեամբ . «Հայ եղբայր-
ներ , ինչպէս որ յայտնի է Ձեզ , վա-
ղը պիտի ընտրուի տեղւոյս թաղ-
խորհուրդը . ուստի կը հրաւիրենք
բոլոր հայ ժողովուրդը որ վաղը ա-
ռաւօր Ս . եկեղեցի գոյ՝ հրաժարեալ
թաղ խորհուրդին կողմանէ իր բո-
նաբարում իրաւունքը պաշտպանե-
լու համար , վասնզի յիշնայները ա-
պօքէն միջոցի դիմած են ժողովուրդի
իրաւունքը ոտնակոխ անելու եւ մեր
դրօնքի ուստեղացի երկու հարազատ
եղբայրները իրարմէ զատելու հա-
մար ք :

Ահա այդ երիտասարդութիւնն էր
որ այսօր արգելք հանդիսացաւ ընտ-
րութեան կայանալուն , եւ ընտրու-
թիւնը յետաձգում էր մինչեւ Սրբա-
զան Առաջնորդի Սօֆիա գալը :

Արիսկ Արամեան

Քաւրից . 30 հոկտ . 1908

(Նար . 572րդ թիւէն եւ վերջ)

Այո՛ . Պ . Սահագասեանը դուրս
եկաւ մրցութեան , ուժը նրա կողմն
էր . բայց յաղթել չկարողացաւ . զո-
նեց դպրոցը , մատաղ սերունդը տու-
ժեց , մինչեւ այսօր էլ դպրոցները
փակ են . մեծախօս եղիչ վարդա-
պետը հրաշքով դուրս պրծաւ նեղ
դրութիւնից . սասմ են , որ իր ժը-
րաջան գործունէութեան համար վե-
հափառը հեռագրով պահանջել էր բա-
ցատրութեան . նշիչ վարդապետը
դուրս պրծաւ թաւրիկից թողնելով
թափփփած ամեն բան , զործերը երե-
սի վրայ . առերկելով , որ վեհափա-
ռը իրեն պահանջել է կախկապու
ձեռնադրելու համար . . (Նէնց էր էր
պակաս , քաղցած հար երազին
կուտ կը տեսնի .) Եղիչ վարդապետը
իր ուրախութեան ժամանակ եւս չը
մտապաւ դպրոցների ցաւալի դրու-
թիւնը եւ կախկապու ձեռնադրե-
լուց առաջ քաղաքից հեռանալուն ա-
ռաջին օրը արեց իր վերջին կար-
գադրութիւնը . «վաղը գնացէք դպ-
րոց եւ եթէ նորից աշակերտները
անկարգութիւն կանեն խիտ մի-
ջոցների դիմեցէք եւ յայտնեցէք կա-
ռավարութեան» մօտաւորապէս այս
է լինում առաջնորդի կարգադրու-
թիւնը , իսկ նրա հու կամակատայ-
ները խկու թեամբ կատարում են .
վարդապետի քաղաքից հեռանալուց
մի ժամ յետոյ հոգաբարձուները (ա-
մօթասել) հաւաքում են դպրոց կան-
չում են մի քանի աղախկալներ եւ
սպասում են տեսուչին եւ ուսուցիչ
ներին . ահա եւ նրանք—տեսուչ
Սահագասեան , տեսչի ողորմելի

պաշտօնակատար (որի անունը աւե-
լորդ ենք համարում սալ) եւ ուսու-
ցիչներին մի քանիսը , երեք հասա-
վից ծառաներով . որոնցից մէկը զի-
նուած էր ատրճանակով , ահա այդ-
պէս ներս են մտնում դպրոց : Աշա-
կերտները իւնեւած են լինում այն-
տեղ , նրանք մօտենում են աշակերտ-
ներին մէկը սկսում է խօսել , տեսիվ ,
որ իրենք չեն ցանկանում , ինչու՞
Պ . Սահագասեան ուժով գալիս է .
Պ . տեսուչը երեւի հիմնած մանկա-
վարժական նոր միտքի վրայ հրա-
մայում է այդ համարակ աշակերտին
ձեռնել . երեք հաստավից ծառանե-
րին միացած եւ երեք ոչխարներ ա-
րածացնելու արժանի հոգաբարձուներ-
ը սկսում են ամենայն անգթու-
թեամբ թակել խեղճ տղային . բն-
կերտները անպատրաստ լինելով փախ-
չում են եւ յետոյ փախտելով գինեւած
վերադառնում եւ իրանց ընկերով
վէժը լուծելու համար , բռնում են
հոգաբարձուներին մէկին՝ մահտեալ
Աւեսայ Մել . Սոյանեանին եւ ծա-
ռաներին մէկին լաւ թակում . միւս-
ները փախչում են ուսուցչարան մըա-
նում :

Ժամի լին մօտաւորապէս կտա-
վարութիւնից մարդիկ են գալիս եւ
մի կելուց հանգստացնում տղաներին :
Հոգաբարձուները մի քանի օրից յե-
տոյ զանազան բողբոջին անմեղ
մարդկանց անուններ են տալիս ու-
տիկանութեան եւ վերջիններս էլ բա-
նելով նրանց տանում են մի քանի
թուժան առնում բաց թողնում :

Ահա այդ ժամանակ Պ . Մ . Յարու-
թիւնեանը տեսնելով որ պայքարում
մասնակցող իր կողմնակիցները տու-
ժում են նրեթապէս , մէկը մինչեւ
անգամ քիչ էր մնում զուէր անմիտ
քահանայի դաշոյնի հարածին . միւս
կողմից սպասում են դպրոցից իւել
860 թուման իբրեւ վարձ շմտու-
ցած ծառայութեան : Այդ բոլորը
նկատի ունենալով Պ . Մ . Յարու-
թիւնեանը խնդրեց իրեն համակրող-
ներին եւ աշակերտներին , որ մա-
ռանան իր անունը իբրեւ սեսչու-
թեան թեկնածուի : Ուրիշ կերպ չէր
կարելի անել , որովհետեւ Եղիչ Մու-
րատեանը մի շինողիկ է , որի մէջ
կիրքն է գործունէութեան շարժա-
ռիթը , իսկ պ . Ռ . Սահագասեանը
մի ինքրիզան է , որ միայն պղտոր
ջրում ձուկ որսալ գիտէ :

Առաջնորդ Մուրատեանը իր ըն-
թացքով այժմ դուրս է եկել հասա-
րակական խաղաղ գործունէութեան
սահմաններից . նա այժմ տեսնում
ենք սկսել է վնասել մի այլ գործի ,
որի վարիչները երեւի մի օր հաշիւ
կը պահանջեն հայր սուրբից . .

Ասկան Ս .

Յ . Գ .—Նամակիս սկզբում տակի
որ առաջնորդարանում կայացած
խառն ժողովը չորս պարտաւոր մար-
դիկ էր ընտրել դպրոցաց այս գոր-
ծին վերջ տաու համար . այդ պա-
րտները մի քանի օր շարունակ ժո-
ղովներ ունենալուց յետոյ վերջը գա-
լիս են հետեւեալ եղբակացութեան ,
որ—թէ պ . Ռ . Սահագասեանը եւ թէ
պ . Մ . Յարութիւնեանը յետ վերջ-
ներն իրենց թեկնածութիւնը եւ ա-
պա նոր տեսուչ հրաւիրեն կովկասից
երկու կողմի համաձայնութիւնը առ-
նելուց յետոյ դիմում են հոգաբար-
ձութեան այս վերջինս էլ է ընդու-
նում այդ , բայց երբ վարդապետին
են դիմում այս կրթից այնչափ կու-
րացած լինելով մերժում է այդ պա-

րտների որոշումը եւ խնդիրը հաս-
ցնում այդքան ցաւալի դրութեան .
որ այսօր նոյնմեր մէկն է , բայց
Լիւաւայի դպրոցները փակ են . ա-
շակերտներին մի մասը ցրած բող-
բակներին , մի մաս , կաթողիկոսի
մօտ է եւ մի մասն էլ փողոցներում
է թափառում . փոքր ու պատիւ
թեմակալ առաջնորդին . . .

Նոյն

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՍՍՍԱՆԻՑ

Թեհրան 20 սեպտեմբերի —
Պատուական քնարժեռումի անցեալ
համարներից մէկում , եթէ չեմ
սխալուում , մի խումբ ուսանող-
ների կողմից հրատարակուած էր
մի զոլտրիկ կոչ , որով պարտա-
կանութիւն էր դրում բոլոր եր-
կրների հայրի վրայ միահամու-
ռութեամբ ընդդիմադրել Հայոց
վանքերի կալուածների անու-
ղար յափշտակմանը , — այսինքն
ամեն կողմից Հայոց Հայրիկին
եւ որջերի ցարին հեռագրներ
ուղղեն , որոնցով խորհուրդ տան
ուսանչին շտորագրել կալուած-
ների գրաման թուղթը , իսկ
երկրորդին՝ թերեւս կարողանան
յետա կասեցնել տալ իր շար գի-
տաւորութիւնից եւ թաթարական
յասկութիւնից :

Այդ կոչը , որ մարմնացումն
էր իւրաքանչիւր հայի վշտաբեկ
սիրտը յուզող ու ցնցող եւ նրա
վրայ խորապէս ազդող ոյժը , չէր
կարող իր զօրեղ ներգործութիւ-
նը շունենայ եւ Պարսկաստանի
մայրաքաղաք՝ Թեհրանի հայ
բնակիչներին գէթ փոքրամասնու-
թեան վրայ . Ուսանողներից ո-
մանք , որոնց զգալուն սրտերում
արձագանք էր գտել յիշեալ կո-
չը , սկսեցին մի սեսակ պրօպա-
գանդայ անել եւ արձարծել Թեհ-
րանում հայ ուսանողութեան այդ
յոյժ ցանկալի եւ անյապապ իրա-
գործելի միտքը . նրանք , այս-
պէս առած , պիտէրական պաշ-
տօն էին ուզում կատարած լինել
այդ կարեւոր գործում . բայց . . .
անյաջողութիւնը շատ մեծ էր եւ
յուսահատութիւնը — տրտմեցու-
ցիլ : Կենդանի իօսքը ապաստ
սրտերի էր հանդիպում , փոխա-
նակ ցանկալի յուզում արգասա-
ւորուելու . . .

Հայի՛ իր գլխավերեւը պատ-
վող ներկայ ճգնաժամի եւ ընդ-
հանրապէս անցեալ ծանր եւ
ղաւնալին ոլարագանների ուժ-
գին ճնշումի արտաբերած հեծ-
կլուանքին ձայնակից լինելու
համար , անպայման հարկաւոր է
ունենալ քերարեկ սիրտ եւ թր-
թուուն հոգի , որոնցից զուրկ է
հայութեան կեդրոններից ան-
ջատուած թեհրանցի հայը . նրա
ուշադրութիւնը , նոյն իսկ Ռու-
սահայոց ներկայ օրհասական վի-
ճակի մասին խօսելու ժամանակ ,
գրաւում է մօտիկից անցնող ա-

մեն մի պարսկից . նա անդադար
զլուխը այս ու այն կողմն է զար-
ձնում , աչքերով շարաճնութիւն
արտայայտում եւ կարծես ուզում
է բազմութեան մէջ փնտռել նը-
րան , որի հետ դրամական հա-
շիւներ ունի : Սյդ իսկ պատճա-
ռով պրօպագանդիստների ձայ-
նելը խեղճեցան եւ մնացին
ձայն բարբառոյ յանապատի . . .
Եթէ կար այդ էական խնդրի
մասին մտածող փոքրամասնու-
թիւն , սակայն նա էլ քաշում
էր մեծամասնութիւնից , նա էլ
սպասում էր որ մեծամասնու-
թիւնը յուզելի . մեծամասնութիւ-
նը շարժել . . . Բայց իզուր . . .

Կովկասի խռովայոյց , սանձա-
կոծ եւ գոռ ալիքների վրայ տա-
րուբերող ու երբեք Հայու-
թեան անդեկ եւ խորտակման ահ-
ռելի անգունդի պռունդին հա-
սած նաւակը խողաղութեամբ
նաւահանդիստ հասնելու համար
չկարողացաւ Թեհրանի եւ նոր
Ջուզէյի հայերից , որոնց նա-
խահայրերը մի ժամանակ ահա-
գին հարստութիւններ են կտա-
կել ազգին՝ գէթ մի հեռագիր
պղկել . . . Անտարբերութիւնը
Պարսկա — Հնդկաստանի թեմի
հայերի կողմից — վհատեցուցիչ
էր . . .

Բայց ոչինչ . թո՛ղ ցանկացողը
անտարբեր եւ սառնարիւն գտնուի
կովկասում կատարուող եղբրեցու-
թեանց հանդէպ , թո՛ղ նոյն իսկ
արհամարական ժպիտ ցուցնի
իւր գէմքով այդ բոլորի վրայ ,
սակայն Ռուսաստանի կորովի հա-
յերը թո՛ղ շարունակեն քաջապէս
պաշտպանել Հայութեան վերջին
եւ անխախտելի իրաւունքները ,
թո՛ղ շարունակեն ընդդիմադրել
իրենց ալգայնութեան հիմքը
փոքրիկ անարգարութեանը եւ
սկզբունք դարձնեն իրենց համար
այն հանրածանօթ ճշմարտու-
թիւնը , թէ աւելի լաւ է հայրեն-
եաց մնացորդների եւ ազգայնու-
թեան համար մեռնելն ու անմահ
անուն վաստակելը , քան ստրկի
խեղճուկ կեանքով . թո՛ղ Ռու-
սաստանի հայերը , զէնքի պակա-
սութեան կամ բացակայութեան
դէպքում սրեն իրենց կողմնակի
ու նոցանով պաշտպանեն հայկա-
կան վանքերի աւանդական եւ հա-
զարաւոր նահատակների ու մար-
տիրոսների թափած արիւնով
սրբագործուած իրաւունքները :
Պղտպաշտպանութեան համար
թո՛ղ ձեռք առնեն նօքս սմեն
տնօսկ միջոցներ , միայն թէ
ունենը լինիլուր . . . «Ընդդի-
մադրութիւն» , — «Պղտպաշտ-
պանութիւն» :

Աղուան

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՈՒՄՆԵՐ

Ազգային վարժարանը հինգ-
շաբթուրէն սկսեալ բացուած է
եւ կը շարունակէ իր կանոնաւոր
ընթացքը:

Պատուաւոր անձնաւորութիւն-
ներէ ժողով գումարուելով քն-
նուած է հարցը, լսուած է աշա-
կերտութիւնը եւ մինչեւ երկ-
րորդ քննութիւն մը՝ վարժա-
րանէն առժամանակեայ կերպով
հեռացուած է Երուանդ Որմա-
քէշխանլեանը: Աշակերտութիւ-
նը այս պարունին դէմ տուած է
չատ աննպաստ վկայութիւն:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամեն օր Մակեդոնիայէն նոր
փախտականներ կուգան Սօփիա:

— Բանակը զէնքի տակ պահե-
լու համար եղած 25 միլիօն ֆր.
ծախքը ընդունեց սօպրանիէն:

— Հակառակ նաչէվիշի դի-
մումներուն Գուռը կը ընդդիմանայ
ընդհանուր ներում հռչակել, եր-
կու պետութիւնները իրենց հոկ-
տեմբերի յիշատակագրին մէջ
չէին յիշած այս կէտը: Գուռը
անկէ քաջալերուած է եւ չուզեր
գոհացում տալ Պուլկարիոյ պա-
հանջներուն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

*Բէօլ. Յայթ. ք կրմանայ. որ
Սէլանիկի մէջ դաւադրութիւն
մը կը կազմուի նորաչէն օսման-
եան պանքը օգը հանելու հա-
մար: Այս նպատակին համար 10
պուլկարներ երգուեր են զոչել
իրենց կեանքը:

— Մանասթրի մէջ մահմէտա-
կանները ժողով գումարելով
բողոքեր են եւրոպական սպանե-
րու հակողութեան դէմ եւ քրիս-
տոնեաներու հօսցէին սպառնա-
լիքներ ուղղեր:

— Սուլթանը ճաշկերոյթի հը-
րաւիրած է երկու պետութեանց
գեասպանները, որմէ վերջ խօ-
սած բարենորոգմանց մասին:
Աղուէսը կուզէ անուշի կապելով
խնդիրը ձգձգել:

ՄԱԿԵՂՈՒՆԻԱ

Սարաֆով շքեղ ընդունելու-
թիւն գտաւ Պէլկարատի մէջ, ուր-
կէ մեկնեցաւ Վիէննա:

Պէլկարատի մէջ կազմուեցաւ
գաղտնի ժողով մը, որու մաս-
նակցեցան Կէրչիքով Սարաֆովի
զինակիցը և քաղաքական անձ-
նաւորութիւններ: Գարնան Սեր-
պիա ալ պիտի մասնակցի ապս-
տամբութեան: Վեց սպաներ ար-
դէն զրկուած են հին Սերպիա ա-
պստամբութիւնը նախապատրաս-

տելու համար: Սահմանէն անցու-
ցած են 4000 մաուզերեան եւ
պէրտանի հրացաններ, ռազմա-
մթերք և ռումբեր:

Պէլկարատի թիւրք գեասպանը
բողոքեց արտաքին գործոց նա-
խարարին. վերջինս տուաւ խու-
սափողական պատասխան, որու
վրայ գեասպանը Պոլիս մեկնեցաւ:

ՌՈՒՄԻԱ

Ուսանողութեան բողոքի շար-
ժումները կը շարունակուին:
Ռէթէրօպուրկի մէջ ցրուած են
յեղափոխական թուացիկներ, ո-
րոնց մէջ կը բողոքուի կառա-
վարութեան բռնապետական
սիստէմին եւ համալսարանական
վարչութեան դէմ:

Ուսանող մը անձնասպան եղաւ,
որուն յաջորդեց կրթական տես-
չին դէմ ցոյցեր: Չերբակալուե-
ցան բազմաթիւ ուսանողներ:

— Բիէվի ուսանողները համալ-
սարան եւ դպրոց չեն երթար-
անոնք կը պահանջեն կրթական
վարչութեան հրամարումը: Ճը-
ուեցան յեղափոխական կոչեր:
Պահպանողական եւ ազատամիտ
ուսանողներու մէջ յառաջ եկաւ
բռնցամարտ մը: Եղան բւնտար-
կութիւններ:

— Փրնլանտայի ընդհանուր
կառավարիչը նոյն պաշտօնով
փոխադրուած է Լեհաստան: Սո-
յայտնի է իր բռնաւոր և ռուսամոլ
բնաւորութեամբ:

ՊԱՐՍՎԱՍՏԱՆ

Թէհրանի պետական պանքը,
որ հաստատուած է անգլիացի-
ներու միջոցաւ եւ կը գտնուի
անոնց ձեռքը, միայն իրաւունք
ունէր թղթագրամ հանելու:
Ռուսական պանքն ալ սկսած է
նոյնը ընել: Անգլիացիները բո-
ղոքած են, ծագած է լուրջ հա-
կառակութիւն:

ԱՄԵՐԻԿԱ

Սան Տօմինկօի մէջ յեղափո-
խութիւնը վերսկսաւ: Մ. Նա-
հանգներու կառավարութիւնը
յայտնեց իր դժգոհութիւնը:

— Տօք. Հէլտըն յաջողեցաւ
գերմանացի գինեպանին ականջը
միլիօնատէրին պակաս ականջին
տեղը փոխադրել: Վերաբուժա-
կան գործողութիւնը անցած է
յաջող:

Սեր ընթերցողները արդէն
գրան, որ այս սկանջը 25,000 ֆր.
արժած է:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Յունաստան հետեւելով Պուլ-
կարիոյ եւ Սերպիոյ օրինակին՝
կուզէ իր բանակին ոյժ տալ եւ
զէնքերը նորոգել: Ասոր համար
պէտք է 25 միլիօն ֆր.:

ԱՆԴԼԻՍ

Լօնտօնի մէջ մեռաւ Հէրպարդ
Սթենսըր փիլիսոփան:

Սթենսըր ծնաւ 1820ին Անգլիոյ
Տրպի քաղաքին մէջ: Նախնա-
կան դաստիարակութիւնը ու կր-
թութիւնը առաւ իր հօրմէն, որ
ուսուցիչ մըն էր:

Սթենսըր հռչակ ստացաւ իր
փիլիսոփայական աշխատութիւն-
ներով: Ան զբաղեցաւ նաեւ փոյ-
ձառական հոգեբանութիւնով:
Ներքին աշխարհի մէջ իբրեւ
նախնական իրողութիւն կը ընդու-
նի նա զգալութիւնը:

Ան զբաղած է նաեւ տիեզե-
նագիտութեամբ: հոս նա զօրու-
թեան յարակալութիւնը կը ընդու-
նի իբրեւ առաջին սկզբունք:

Սթենսըր աշխատանքներ ունի
բարոյ սկանի ու հասարա-
կական գիտութիւններու վրայ:
Փիլիսոփային եղաւ արժանավայել
թաղում:

ԳԵՐՄԱՆԻԱ

Ռայխսթակի մէջ ջանացին
սօցիալիստները փոխ նախագա-
հի աթոռը սօցիալիստի մը տալ,
բայց չը յաջողեցան:

— Գալանազո. սպ տիկին Փիլըր
Տէստուի մէջ երեք առիւծներու
մէջ խաղացած ատեն՝ առիւծնե-
րէն մէկը կատղեցաւ և թաթովը
փշրեց 20 տարեկան մատաղ տիկ-
նոջ գանկը: Արիւն տեսնելով
միւս առիւծներն ալ կատղեցան
և խեղճ կրնը փարատեցին: Չո-
հին որդիները հանգիստես էին
այս պիտալի տիսարանին:

— Պէպէլ պատգամաւորական ժո-
ղովին մէջ երկար ճառ մը խօ-
սելով ընտադատեց կառավարու-
թեան ընթացքը և Պուլովի սօցի-
ալիստներուն դէմ ըրած արտա-
յայտութիւնները: Պուլով պա-
տասխանեց շատ կարճ:

— Ռայխսթակի նախագահ ըն-
տրուեցաւ կոմս Պալսթրէմ: Կեդ-
րոնը առաջարկեց վերցնել ճիւղ-
ուիթներու դէմ եղած օրէնքը:

ԻՍՅՐԱԷՆԻԱ

Սէզուան գաւառին մէջ քրիս-
տոնեաներու դէմ սկսած է հալա-
ծանք:

— Միացեալ նահագներու կա-
ռավարութիւնը պիտի առաջար-
կէ Ռուսիոյ Մանչուրիայէն ելլե-
լու խնդիրը յանձնել Լահէի հաշ-
տարար ատեանին:

ՀՕԼԱՆՏԱ

Հօլանտայի Սէրամ գաղութի
Ալֆուրեան ցեղերը զիրար կը
կոտորեն: Կառավարութիւնը
չօրք զրկեց կալիւն պաշարելու:

ՉԻՆԱՍՏԱՆ

Կայսրը հրամայեց բանակին
մէջ մտնել թարեւորագումներ,
անոր տալ համազգեստ եւ միա-
անակ զէնքեր:

Եուանչիքհայ հրամանատար
կարգուած է:

ՄԵՐ ԲԱՄԱՆՈՐՈՒՆԵՐՈՒՆ

Մեր բաժանորդներէն կը խն-
դրուի, որ փութացնեն մեղ շը-
կել իրենց բաժնեգրները և յի-
տաճաց պարտքերը: Պէտք է
գիտնալ որ պորտաճանաչութիւ-
նը առաքիւնութիւն մըն է:

ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

Ե. Թոմիսեանի խմբագրած պատշե-
րագրոյ
«ԼՈՅՍ»

Գրպանի, Պաշի և Սեյանի օրա-
ցոյցները:

«ԼՈՅՍ» օրացոյցները ՆՊԱՍՏԱՆ է
գրաւթեան լոյս պիտել ժողովրդի
խաւար խաւերում: հար եղածի չա-
փով պ. տեղեկացնել հայի անցեալն ու
ներկան, մշտական կրթ. մղել այն
հրատարակութիւնները դէմ, որոնք
նիւթական շահերից դրդուած սնա-
պաշտութեան և տգիտութեան սեր-
մեր են ցանուած ընթերցողների շրջա-
նում և առհասարակ ընթացանու-
թեան օգտակար նիւթ և անհրաժեշտ
գիրքերը տարածել:

Այդ նպատակին հասնելու համար
մենք չենք խնայել ոչ ջանք և ոչ
նիւթական միջոցներ, աշխատակ-
ցութեան ենք հրաւիրել յայտնի հե-
ղինակները ու մասնագէտները, բո-
ւոր երեք օրացոյցներն էլ պատկերա-
զարդել ենք յատուկ պատրաստել
տուած նկարներով, իսկ բովանդա-
կութիւնը գաւառերէլ ենք այնպէս,
որ օրացոյցները իւրաքանչիւր տեսա-
կը առանձին վերցրած մի ամբողջու-
թիւն կազմէ և միեւնոյն ժամանակ
ցանկալի ու օգտակար լրացուցիչ լինի
միւս երկուսի համար:

Պուլկարիայում գնել փափաքողնե-
րը թող գրինք Բուսուլուք Մ. Պամա-
ճեանի:

Գրներն են. Գրպանի մէկ ֆր. Պա-
տի 1,50, Սեղանի 5 ֆրանք:

Ծանօթ. — Գնողներու գրեւոր թիւն
ընծայելու համար դրամի փոխարէն
ընդունուած են նաեւ Պուլ. նամակա-
գրօյմ: Բօստի ծախսը վաճառողին
վրայ:

Է. ԱԿՆՈՒՆԻ

Կովկասեան վէրքեր
Հրատարակութիւն Հ Յ. Գաշ-
նակցութեան:

Գրներն է 3 ֆրանք:

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница, «Взаимность» Варна